


Է. Յովհան Պրիեն թագաւոր Երուսաղեմի փեսայանայ Լեւոնի

Յառաջ քան զնոր թագուիին Հայոց՝ իշափ հասեալ ամուսնութեան դուստր առաջնոյն՝ Ռիթա որ եւ Ստեփանիա, յամի 1214 կամ 1215 խօսեցաւ՝ իհարսնութիւն՝ միոյ՝ իհռչակաւոր գործօն արանց, մարտկաց եւ անուամբ թագաւորելոց՝ իԺամանակին, այն է Յովհան Պրիեն, յազնուական տոհմէ Փռանկաց. «որ էր (ըստ մերոյս պատմչի՝ որ եւ Ըռէ Ճուան կոչէ զնա) այր սկայաձեւ, եւ աստուածապաշտութեամբ կատարեալ, քաջամարտիկ եւ արիագոյն՝ իպատերագմ». մարթ է յաւելլուլ թէ եւ փոքր մի բաղդախնդիր: Ոչ անձամբ եկն սա՝ իՀայս՝ առնուլ զկիսն, այլ առաքեաց հարսնածու զկարգապետն եւ զասպետս Հիւրատանն. «եւ եկեալ մայստրն Ոսպէթլուն՝ նաւութ՝ իյԱքքայոյ, իգետբերանն Տարսնի. եւ կապեցին զամուսնութեան պայմանն՝ մայստրն եւ թագաւորն. եւ առեալ տարան պսակեցին յԱքքա»²¹¹։-



Ի պէտս մեծածախ հարսանեացն եւ պաշտատականի դստերն՝ ոչ ունելլով յայնժամ Լեւոնի զանձ բաւական, էառ փոխ՝ իԳուարին կամ Կերէն (Guarin de Montaig կե)րգապետէ Հիւանդանոցին 20,000 ոսկի բիզանդ սառակինեան²¹², Աքքեայի կշռով, եւ ետ՝ իգրաւ զձկեր գաւառ եւ

²¹¹ Յիշէ եւ փռանկ պատմիչն Խաչակրաց, յամն 1215. «En celui point que il etait bail, esposa il Estefemie, la fille dou roi Livon d'Ermenie, que il avait de sa premiere feme». **Eracles** XXXI, 9. – Միւս եւս հին ժամանակագիր (Ernoul) ասէ վասն Յովհաննու, յետ մահուան առաջին կնոջն. «Li rois ni vaut mie estre sans femme, ains manda al roi d'Ermenie qu'il li envoiait une de ses filles, et il le prendroit a feme. Li rois li envoia, et li rois Jehan l'espousa».

²¹² ...«Ad preces meas assiduas, Dominus frater Guarinus de Monte Acuto, venerabilis Magister Sancte domus Hospitalis Iherosolimitani, accomodavit mihi viginti millia Bisantiorum sarra-centatorum ad pondus Accon, pro supplendo matrimonio dilecte mee filie, quam tradidi in uxorem Illustri Regi Iherosolimitano. Unde apignoravi eidem Magistro et universis fratribus